

ՏԱՄՆՄԷԿԵՐՈՐԴ ՏԱՐԻ

ՄՇԱԿ

Տարեկան դիրք 10 բուրլ, կէս տարվանը 6 բուրլ:
Առանձին համարները 5 կոպէկով:
Թիֆլիսում գրվում են միմիայն խմբագրատան մէջ:
Օտարազարգացիք դիմում են ուղղակի
Тифлисъ • Редакція «Мшакъ»

Խմբագրատունը բաց է առաւօտեան 10—2 ժամ
(Բացի կիրակի և տօն օրերից):
Յայտարարութիւն ընդունվում է ամեն լիզուով:
Յայտարարութիւնների համար վճարում են
խրաքանչիւր բառին 2 կոպէկ:

ՔԱՂԱՔԱԿԱՆ ԵՒ ԳՐԱԿԱՆԱԿԱՆ

ՄՇԱԿ

ԱՄԵՆՕՐԵԱՅ ԼՐԱԳԻՐ

(ՏԱՄՆ ԵՒ ԵՐԿՐՈՐԴ ՏԱՐԻ)

ԱՌԱՋԻԿԱՅ 1883 ԹԻՒՆ

Կը հրատարակվի նոյն դիզիտով և նոյն պրօգրամայով:

ՊՐՕԳՐԱՄԱ

I. ՏԵՐՈՒԹԵԱՆ ԿԱՐԳԱԳՐՈՒԹԻՒՆՆԵՐ: II. ԱՌԱՋՆՈՐԿՈՂ ՅՕԳՈՒՅՄՆԵՐ: III. ԵՆԵՐԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ: Ընդհանուր յօդուածներ, թղթակցութիւններ, լուրեր: IV. ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ: Ընդհանուր յօդուածներ, թղթակցութիւններ, լուրեր: V. ԽԱՌՆ ԼՈՒՐԵՐ: VI. ՀԵՌԱԳԻՐՆԵՐ: VII. ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ: Ֆելիետոն, վէպեր, բնօրինակ և թարգմանական յօդուածներ գիտական ամեն ճիշդից, թղթակցութիւններ: VIII. ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ: ԲԱՃԱՆՈՐԿԱԳԻՒՆ: Տարեկան 10 բուրլ, վեց ամսվայ 6 բուրլ, իւրաքանչիւր ամսվայ 1 բուրլ: ՀԱՏՈՎ համարները 5 կոպէկ: ՀԱՍՅԷՆ. Тифлисъ, редакция «Мшакъ»

Խմբագիր—Հրատարակող ԳԻՐԿՈՐ ԱՐՇՐՈՒՆԻ

ԲՈՎԱՆԳՎԱԿՈՒԹԻՒՆ

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ: Նամակ Աղնախից: Նամակ խմբագրին: Ներքին լուրեր:—ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ: Թիւրքիա: Եղիպտոս: Նամակ Պարսկաստանից: Արաքիս լուրեր:—ԽԱՌՆ ԼՈՒՐԵՐ:—ՀԵՌԱԳԻՐՆԵՐ:—ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ:—ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ: Ի՞նչ է փոխառութիւնը (КРЕДИТЪ):

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՆԱՄԱԿ ՍՂՆԱԽԻՑ

29 նոյեմբերի

Մեր հոգաբարձութեան օրով, տեղիս ծխական հայ երկսեռ դպրոցները լինելով նիւթական կող-

Բ Ա Ն Ա Ս Ի Ր Ա Կ Ա Ն

Ի՞ՆՉ Է ՓՈԽԱՏԻՈՒԹԻՒՆԸ (КРЕДИТЪ)

Այն գաղափարները, որոնք արժանի են ժողովրդի մէջ փոխառութեան վերաբերմամբ, բազմապէս են: Խօսում են փոխառութեան վրա երբեք մի հրաշք գործող ոչինչ, երբեք անտեսական երեւոյթները շարքից դուրս մի երեւոյթի վրա: Խուրհուրդ փոխառութիւնը ժողովրդների անտեսական զարգացման խելացի հետեանքն է: Նա լոյս տեսաւ միայն այն ժամանակ, երբ պարսպմանց բաժանումները ընդարձակապէս մուտք գործեց արդիւնաբերութեան մէջ և նոյն այդ պարսպմանները բաժանումն եղաւ նրա ծննդան պատճառը:

Ժողովուրդների կենսի մանկական օրերում, երբ ամեն մէկ անհատ ինքն էր պատրաստում իր համար հարկաւոր բոլոր պիտոյքները, երբ ամեն մէկ զերգաստուն մի և նոյն ժամանակ արդիւնաբերող, վաճառական և սպառող էր, այն ժամանակ կարիք չէր կար փոխառութեան մէջ: Հասարակութեան և մարդու պիտոյքների զարգացման հետ, առաջ եկաւ պարսպմանների բաժանումն, ամեն մէկը սկսեց պարսպել միայն նրանով, ինչ բանի համար նա իրան ընդունակ էր համարում, իսկ միւս բոլոր պէտքերն անհատների փոխառութեամբ: Կոչակարը դիտել, որ եթէ նա պարսպվի միայն կոչիկ կարելով, նա բացի օգտից ոչինչ վնաս չի ունենայ, աշխատանքի մասնաւորութիւնը (специализация) շահաւէտ է թէ արդիւնքի քանակութեանը և թէ նրա յատկու-

մանէ անապահով դրութեան մէջ և նրա հոգացողութեան պարտականութիւնը դրած լինելով մեզ վրա, պարտք համարելիք, որքան կարելի է ապաստելու նրան այդ անապահովութիւնը վիճակից ուստի դիմելիք նամակներով մի բանի յարգելի մեր համաքաղաքացի պարտնեիրին խնդրելով օգնութիւններ: Ընդհանուր կերպով կերպով ասենք, որ շատերը ուսման կարեւորութիւնը լաւ հասկանալով, չէ իր նայեցին իրանց վերջին կողմէն անգամ նուիրելու: Մասնաւոր հոգաբարձութեան շնորհակալութիւն է յայտնում Պետերբուրգում բնակվող տեղացի պարսպող Ստեփանիչ Տեր-Ստեփանեանցին, որը յարգեց մեր իրան ուղղած նամակը ուղարկելով յօդուած մեր ռուսականամբարաններին նուէր յետոն բուրլի (50 ռ.), որ ստացանք այսօր: Յանկանում ենք և միւս պարտնեիրին հետեւել այդ աղին ձեռնար-

թեանը համար, մի և նոյն ժամանակ մարդու հարկաւոր պիտոյքները աւելի կատարելագործվում են: Կոչակարը իր կոչիկները բերում է հրապարակը, այն յայտով, որ նա կը փոխանակի նրանց միւս իրան պէտքերն առարկաների հետ, նա յոյս ունի, որ կը գտնի շուկայում միւս արդիւնաբերողներին, որինակ դերձիկին, հացթուխին, մասվաճառին և այլն, որոնք որ եկած կը լինեն նոյն մտադրութեամբ: Հասկանալի է, որ եթէ կոչակարի յոյսերը իրագործվեն, այն ժամանակ նա կը ստանայ փոխանակութեամբ իր կարիքները բազմապէս ավելի քան նամար ըստը: Արդեմ փոխանակութիւն կարող է գոյութիւն ստանալ միայն այն ժամանակ, երբ հրապարակի վրա ներկայ կը լինեն եթէ ոչ բոլոր արդիւնաբերողները, գոնէ նրանցին շատերը: Փոխանակութեան անհրաժեշտ պայմանն է, որ բոլոր արդիւնաբերողները միասին սկսվին ու միասին վերջանան: Անհրաժեշտ է, որ նոյն միջոցում, երբ կոչակարը կը վերջանի իր արդիւնաբերութիւնը, վերջանան նոյնպէս միւս արդիւնաբերողները իրանց գործերը: Բայց տեսնելով, թէ արդեօք ինչ է կարող պատահել այն ժամանակ, երբ մեր վերեւ ենթադրած պայմանը բացակայ լինի: Եւ մի պղպիսի դէպք հասնական է զլլաւորապէս արդիւնաբերութեան ներքին յատկութիւնները և օրէնքների պատճառով, որովհետեւ այն ժամանակվայցը, որ պատահում է ամեն մէկ արդիւնաբերողին, որպէս զի փոխանակութեան ենթակայ եղող առարկաները շատ զանազան լինեն, թէ արդիւնաբերողութիւնների սկիզբը և թէ վերջը չեն կարող միասնական լինել, այդ ենթադրութիւնը չէ պարունակում իր մէջ ոչինչ անհասկանալիութիւն: Տեսնենք թէ ինչ կը լինի դրա հետեանքը: Հացթու-

կութեանը, որով կարող էին անսահման իրանց քաղաքի ռուսամարտների անունը:

Հոգաբարձու՝ Եղիշէ քահ. Տեր-Աստուածաբանաց

ՆԱՄԱԿ ԽՐԳԱԳՐԻՆ

Թիֆլիս, նոյեմբերի 29-ին

Մշակների խնդիրը կրկին հրապարակ ելաւ և խօսակցութեան նիւթ դարձաւ, շնորհի շնորհումս քաղաքային փառակների տակ մնած կրկու մշակները: Պէտք է նկատել, որ մեր հասարակութիւնը դեռ շատ հեռու է քաղաքակրթված հասարակութիւն լաւի բուն մտքին համապատասխանելուց, որովհետեւ նա չունի ինքնուրոյն հասարակական կարծիք, դատողութիւն և պատրաստակամութիւն իր շուրջը եղած ամեն օր կատարող դառն իրողութիւնները նշմարելու, դարձան տանելու նրանց: Մեր հասարակութիւնը թմրած է և միայն երբեմնակի սաստիկ ցնցումներ են կարողանում ժամանակաւորապէս նրա աչքերը բացել, զգաստացնել նրան.—անցան այդ ցնցումների ներգործութիւնը և հասարակութիւնը դարձեալ ընկնում է թմրութեան մէջ:

Ամենքին յայտնի է, որ «Մշակը» առաջինը եղաւ, գոնէ տեղական հայ մամուլի մէջ, որ բարձրացրեց մշակների խնդիրը բայց այդ առթիւ զբւղւած յօդուածները ոչինչ նշանակութիւն չունեցան և ոչինչ ազդեցութիւն չարին հասարակութեան վրա. նա նոյն անտարբերութեան մէջն էր, մինչև 7 մշակների աղէտակի անցքը, որ խիստ կերպով ցնցեց թմրած հասարակութեան շղերը և զօրեղ փաստաբան եղաւ մշակների դատին: Շատ զրկեցաւ, շատ խօսեցաւ մշակների մասին, բայց այդ բոլոր ոչինչ հետեանք չունեցան, հասցաւ փոքր ինչ դէպքը և հասարակութիւնը կրկին ընկաւ իր սովորական թմրութեան մէջ...

Այնուհետեւ չեղաւ մի խօսք անգամ մշակների մասին, մինչև կրկնուր ցնցումը, որ մէք պղծութեամբ լինեցին: Գուցէ մասնաւոր կը լինեն մեզ մշակների ապագայ իրազօրծվելը փոխառու-

լիւր, որ պատրաստել է հացի մեծ քանակութիւն այն յոյսով, որ կը գտնի հրապարակում գիտողներ, որոնք կը համաձայնվին վերցնել նրանից հացը և փոխառելու տալ նրան միւս, հազուադէպ, կոչիկ և այլն, յանկարծ չի գտնի այնտեղ կոչակարին կամ դերձիկին, որովհետեւ վերջինները դեռ վերջացրած չեն իրանց արդիւնաբերութիւնները: Հացթուիւր այդ հանգամանքից դուրս դալու համար երկու ճանապարհ ունի. կամ նա պէտք է վերադառնայ հացը տանելով իր հետ տուն և սպասէ մինչև որ կոչակարը և դերձիկը կը կարեն կոչիկ և հագուստ, կամ թէ չէ նրանց մէջ համաձայնութիւն կը կազմայ՝ հացթուիւր կը տայ կոչակարին և դերձիկին հաց այն պայմանով, որ և սրանք, կարը վերջացնելու համար մի յայտնի ժամանակամիջոցից յետոյ, վերադարձնեն հացի արժէքը հազուադէպ և կոչիկով, այդ երկու ճանապարհներից լաւագոյնը ընտրելը դժուար չէ. կատարած չը կայ, որ հացթուիւր կընտրի երկրորդ ճանապարհը: Նա չէ կարող հացը հետոն առած վերադառնալ տուն, որովհետեւ նա չի ցանկանայ կորցնել իր հացը և հացի հետ կորցնել նաև իր աշխատանքը: Արեւմտեան մենք տեսնում ենք, որ անհրաժեշտ է լինում արդիւնաբերողի համար ծախել ապրանքը որոշեալ ժամանակով, այսպիսով անհրաժեշտ է դառնում դիմել փոխառութեան: Այսպէս ահա առաջ է դրվում փոխառութիւնը, բայց ոչ ինչ պէս մի պատահական արեւոյթ, այլ որպէս ժողովրդների մի որոշ աստիճանի ստանալական զարգացման խելացի հետեանք: Գոյութիւն առնելուց յետոյ, փոխառութիւնը հասարակութեան դարգացման հետ, աւելի և աւելի զարգացաւ: Գիտութիւնների և արհեստների առաջադիմութիւնը լայն ապարկել բացին նրա գործադրութեան համար: Արդիւնաճանութեան պրօգրէսը ստեղծեց փո-

խայտղական ընկերութեան վրա, բայց մենք կատենք, որ այդ շատ քիչ և սահմանափակ նշանակութիւն ունի. խնդիրը պէտք է աւելի խորը ընենք:

Ինչ կարծիք, որ փոխառու խնայողական ընկերութիւնը իր օգուտն ունի, բայց պէտք է նկատել, որ այդ ընկերութիւնը լիովին չէ ապահովում մշակի կենսը, նրա գոյութիւնը, նրա տնտեսական վիճակը դարձեալ նոյն խախտողութեան մէջ է մտնում: Այդ ընկերութիւնը չէ ապահովում երկրաշրջանում մշակ, նահապետական պարզ դեղջիւղուհու բարոյականութիւնը, նա այնու ամենայնիւ խրված է անբարոյականութեան ցեխի մէջ մինչև վերջը, նա անկարող է սրբել զիւրազու ընտանիքի արցունքները, նա չէ նպաստում ազգայնականութեան շատանալուն. հաղաբար հայերը դարձեալ տուն ու տեղ, ընտանիք թողած՝ կենտրոններում դեղերում են: Փոխառու խնայողական ընկերութիւնը և ուրիշ այդպիսի ընկերութիւնները շատ քիչ բան կարող են անել մշակներին համար, դրքա միայն տեղական սահմանափակ նշանակութիւն ունեն: Այդպիսի ընկերութիւնների նպատակն է միայն ամբողջ չարիքը, դժբաղդութիւնը փոքր ինչ թէթեւացնել: Այլապէս չէր էլ կարող լինել այդպիսի ընկերութիւնները չունեն այնքան նիւթական գործիւն, որ կարողանան արեւատախիլ անել որ և է չարիքախտ: Մի կողմ թողնելով կողմնակի միջոցները, որոնք միայն ժամանակակից նպատակութիւն ունեն, պէտք է մտածել աւելի հիմնարկ դրեւնորդումների մասին, որոնք կարող կը լինեն արեւատախիլ անել վերջնականապէս այն չարիքը, որ ապագայում գուցէ ծանր հետեանքներ կուսենայ և շատ մտքը կը զբաղեցնի, ու, ինչպէս ասում են, հասարակութեան վրա է ժամ չի նստի: Մեր կարծիքով մտածութեան խնդիրը, առարկան պէտք է լինի վերջ դնել, կամ գոնէ չափաւորել, հեղեղի պէս կենտրոնները թափվող, երկրաշրջանը, մշակ դասի հոսանքը: Ի հարկէ, մեր խօսքը առ այժմ Պարսկաստանից և Տաճկաստանից եկողները

խառութիւնը կամ կրեղիտը, իսկ փոխառութիւնը իր կողմից նպաստում է մարդկութեան առաջադիմութեանը:

Այդպիսով փոխառած օգուտը, փոխառած զարկերով, թէ փոխառութեան և թէ զարգացող արդիւնաբերութեան կողմից, ժողովրդական անտեսութիւնը հասել է այն բարձր աստիճանին, որի վրա մենք նրան այժմ տեսնում ենք:

Որպէս զի չը լինեմ ունայնաբան, ես կաշխատում ցոյց տալ, թէ ինչպէս է փոխառութիւնը արդիւնաբերութեան նպաստում:

Յայտնի է, որ ամեն մէկ արդիւնաբերութիւն զլլաւորապէս երկու տարբերից է գոյութիւն ստանում՝ կապիտալից և աշխատանքից, որինակ, կոչիկ կարելու համար հարկաւոր են կաշի, աւել, թէ և այլ պարագայք, սքա կազմում են կապիտալը, յետոյ հարկաւոր է կոչակարի աշխատանքը: Անհրաժեշտ է, որ կապիտալը լինի աշխատողի ձեռքին, որպէս զի կարելի լինի ստեղծել մի որ և իցէ առարկայ, որպէս զի առաջ զայ արդիւնաճանութիւն: Բայց կարելի է աւել, որ արդի կենսը առաջ պայմանը դրեթէ միշտ բացակայ է. ընդհակառակն, մենք տեսնում ենք, մեծ մասամբ, որ կապիտալը ոչ այլ ինչ է, եթէ ոչ անցեալ աշխատանքի դիզված մնացորդներ, որոնք աշխատողի ձեռքին չեն լինում: Կապիտալը այն մարդու ձեռքին, որ չէ ցանկանում աշխատել, գործ դնել նրան, մտածալ կապիտալ է: Նոյնպէս և միակ աշխատութեան ցանկութիւնը, գործելու ոչքը նշանակութիւն չունեն ժողովրդական անտեսութեան համար, մի այդպիսի աշխատանք կամ բոլորովին անարդիւնաբեր կը լինի, կամ թէ դատապարտված կը լինի ծառայել մշակական օրավարձով և կատարելապէս կախված կը լինի կապիտալից: Արեւմտեան պրօգրէսը ստեղծեց փո-

վրա չէ, այլ կողմնակից և Անդրկովկասից եկողներին: Այդ հասանքի առաջին առնելու համար պէտք է առանձին ուշադրութիւն դարձնել ժողովրդի կացութեան պայմանները վրա, պէտք է քննել նրա կեանքը ամբողջ տարվայ ընթացքում, հետեւել երկրագործ գիւղացուն, տեսնել, զգալ նորա կրածները: Պէտք է մտնել նրա խրճիթը, ակնաստես լինել հազար ու մի սիրա ձմեռող տեսարաններին, պէտք է ամբողջ օրը արին ընթացիկ թափելուց վերջը անընդհատ դիտել նրա լուսացնել երկրագործ գիւղացու հետ և այս բոլորից վերջը պէտք է տեսնել և նրա ստացած արդիւնքը, նրա տեսնակալ գրութիւնը... Պէտք է տեսնել գիւղացուն կուշ եկած անգութ վաշխատուի առաջ, և ահա այն ժամանակ միայն հասկանալի կը լինի մեզ թէ ինչպիսիք է առաջանում այն հասանքը, որ սպառնում է կարծ ժամանակում հեղեղել մեր կենսարժեքները:

Կարծում ենք, որ մեր միջքը արդէն հասկանալի եղաւ, որովհետեւ առ այժմ մեր ոյժերը այնքան զօրաւոր չեն, որ կարողանայինք մի առանձին յանձնաժողով կազմել գիւղին և նրա կեանքին ու պահանջներին լաւ ծանօթ անձնաւորութիւններին, որոնք չընկելով մասնաւորապէս այն դաւաճները և դեղերը, որտեղից լինում է սովորաբար մշակիչների մեծամասնութիւնը, մասնաւորապէս տեղեկութիւններ հազարից կարողանալին այն տեղերի, նրանց վիճակի վրա, տեղական պահանջները մասին և առհասարակ այն բոլոր բաների վրա, որոնք առիթ են տալիս երկրագործին թողնել խաղաղ, կուշտուրական պարագայումը և հարկադրում են նորան դիմել կենսարժեքը բեռնակրութիւն և ուրիշ զոռուկի ու մարդկային արժանաւորութիւնից ստոր պաշտօններ յանձն առնելու: ասում ենք, քանի որ չունենք միջոց վերադառնալ յանձնաժողով կազմելու, ցանկալի էր, որ այդ կէտերի վրա ուշադրութիւն դարձնելին բանիմաց մարդիկ, զլուստուրապէս դաւաճական թղթակցիցները: Թող հասարակութիւնը մտածէ, կամ աւելի լաւ է ասել նա պարտական է մտածելու այս երկուքի վրա, ապա թէ ոչ մի քանի տարուց յետոյ շատ կարելի է մենք կը զրկվինք մեր աշխատող-երկրագործ դասի նշանաւոր մեծամասնութիւնից, ուրեմն և մենք կը զրկվինք կեանքի անհրաժեշտ պետայնից, հացից կամ, ինչպէս արդէն փորձը ցոյց տուց, մենք ստիպւած կը լինենք Ամերիկայից բերել առաջ մեր հացը: Բացի այդ մենք պէտք է մտածենք, որ այդպիսով մենք հետզհետէ կը պարտաստենք մի անբարոյական մեծամասնութիւն մեր հասարակական շրջանում:

Էմմանուէլ

Նա միշտ կը լինի կապիտալիստի հըռ հպատակը և երբեք նա չէ կարող ձեռք բերել մինչև անգամ մի փոքրիկ կապիտալ, որով կարողանար օգուտ քաղել ինքնուրոյն արդիւնաբերութեան բոլոր առաւելութիւններէր: Ահա այստեղ կարող է առաջ գալ փոխառութիւնը իբրև մի բարեբար ոյժ:

Կրեդիտը որոնում է աշխարհի ամեն մի զաղտնի անկիւններում կապիտալներ, որոնք զանազան պատճառներով անարդիւնաբեր են մնացել, և փոխ է տալիս այդ կապիտալները նոցա, որոնք որ ցանկանում են արդիւնաբերութեամբ պարագլխել:

Այդպիսի փոխառութիւնը հիմնված է հաւատարմութեան վրա ղեպի մարդու արդիւնաբերական ոյժերը, որոնք թէպէտ և զեռ իրական հետեանքներ չեն տուել, բայց անկասկած է, որ կը տան այդպիսի հետեանքներ սպազադում: Այն հողը, որի վրա հիմնված է կրեդիտը խաղաղ չէ, ինչպէս շատերը կարծում են, այլ շատ ամուր է: Փոխ շատով կապիտալը բանաւորներին, աշխատողներին, այն պայմանով, որ կապիտալը մի որոշ ժամանակից յետոյ յետ դարձվի, կրեդիտը չէ հիմնվում երեակայական երեկոյթների, լոկ խոտամուկների վրա, այլ իսկական փորձառութեան վրա, որ միայն շատ ասակաւ է խաբուսիկ լինում: Միացնելով անցեալ աշխատանքի արդիւնքը ապագայում արդիւնաբերական ոյժերի հետ, կրեդիտը զօրանով նպաստում է ժողովրդական տնտեսութեան առաջ գնալուն և մարդկային ոյժերի ու միջոցների աւելի խնայելի գործածութեանը:

Վերև ես ասեցի, որ կրեդիտի լոյս տեսնելը պայմանաւորված է հասարակութեան մի որոշ զարգացումով, որ նա չէր կարող գոյութիւն ստա-

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

ՄԱՅԱՊՈՒՅՑ մեզ գրում են, որ այստեղ մի քանի օրվայ մէջ աւազակները կողպտեցին մի ծխախոտի խանութ, մտան մի դինետուն, և կողպտեցին մի այլ տուն ևս, որ կից էր պոլիցիային: Տան տէրերը գողերի յարձակման ժամանակը դիմում են պոլիցիային պրիստաւին, օգնութիւն են խնդրում:

ՈՒՋՈՒՆԼԱՐ գիւղից գրում են մեզ, որ Աքօրի գիւղում անկայտ չարագործներ սպանեցին երկու օտարական անանախտաբանների (չօղար): Նորս հողի այդ սպանութեան պատճառով կալանաւորված են:

ՆԵՅՆ տեղից մեզ գրում են, որ մի ամբողջ տարի է, որ Շուշաէրի հաշտարար դատարանի բաժնում դատաւոր չը կայ, չը նայելով, որ Լօսաի ամբողջ գաւառը Շուշաէրի դատարանին է նայում, գործերը թափված մնում են:

ՍԵՒԱՅՐԱՐ գիւղից գրում են, որ այստեղ մինչև այսօր զարոյց չը կար, բայց հասարակութիւնը զգալով ուսման պէտքը, հիմնեց մի ծխական դպրոց, որի բացումը տեղի ունեցաւ նոյնիման ամսում: Գարոցի համար ընտրված են հողաբարձուներ, նշանակված են ուսուցիչներ և ուսումնարանը ղեկավարված է յարմար շէքեր մէջ:

ՇԱՄԱԼՈՒՅՑ գրում են, որ դաւաճապետ պ. Նատմենկոյի ջանքերով բացվեցաւ մի կուրս, որից մինչև այժմ դուրկ էր քաղաքը: Կուրսի պահպանութեան համար ստորագրութեամբ հաւաքված է 4,300 ռ: Կուրսը այժմ ունի փոքրիկ դրաստուն, ստանում է զանազան լրացրելու:

ՇԱՄԱԼՈՒՅՑ գրում են, որ մի աղքատ կին դիմում է տեղային հայոց դպրոցի հոգաբարձուներին մէկին, խնդրում է, որ իր որդուն ընդունեն դպրոցը: Հողաբարձուն խոտանում է ընդունել միայն այն պայմանով, եթէ կինը կը համաձայնվի մի ամբողջ տարի նրա տան հացը ձրի թխել: Աղքատ կինը չը կարողանալով կատարել այդ պայմանը, իր որդուն տալիս է մի օտար դպրոց:

ԽՈՒՍԱՍՈՒՐԱՅՐԱՐՅՑ գրում են, որ պ. Յով. Խովրեանցը նուրիկ է տեղային հայոց դպրոցին պ. Քիւրքեճեանի Անիի աւերակների լուսանկար-

նալ առաջվայ նահանգնական ժամանակը, նա, կարելի է ասել, նոր ժամանակի ծնունդ է, այն դարավազի, երբ առաջին անգամ հասարակութեան մէջ ծնվեցաւ մարդկանց կղերականութեան և հաւատարմութեան ինքնաձայնութիւնը: Այնպէս դարու փիլիսոփայական ուղղութեան հետ կից, ազատութեան գաղափարի հետ կից, առաջ եկաւ և կրեդիտը: Պարզ բան է, որ կրեդիտը չէր կարող ծնունդ առնել հին ժամանակներում, հին յոյների և հռոմէացիացի օրերում, միջնադարեան տէրութիւնների ժամանակ, երբ մարդու անձը սպասնակված չէր, երբ ժողովրդի անտեսական կեանքը մի որոշ բնութիւն ունէր, այն է մեծ բազմութիւն ստրուկների, փոքր խումբ արտօնութիւն ունեցող դասակարգի, և միջին դասակարգի, Հռոմում պրեքտի և միջին դարերում քաղաքային բնակիչների, որոնք որ պարագլխում էին զանազան արհեստներով: Արդիւնաբերական կեանքը, այժման լայն մտքով, բացակայ էր այն ժամանակ. ամեն մէկը պարագլխում էր իր համար կամ թէ իր շահի համար. պատրիկները ապրում էին ստրուկների աշխատանքով, միայն քաղաքներում զարգանում էր արդիւնաբերական նման մի բան, բայց նա ևս չընպագաւած էր համբարային կազմակերպութեան չինական պատերով:

Տնտեսական այդ դրութեան մէջ, թէպէտ և տեղի էին ունենում փոխառութիւններ, բայց նոքա չուսեցին ոչինչ արդիւնաբերական նպատակ, և ծառայում էին միայն պատրիկների և բարօնների փառասիրութեան և պիճասիրութեանը բաւականութիւն տալու, կամ թէ ծանր հարկերը որոնցով ծանրաբեռնած էին բարօնները իրանց հպատակներին, վճարելու համար: Այդ տեսակ փոխառութիւնը ստիպողական բնութիւն էր կրում, նա կանոնաւոր կրեդիտ չէր, որ երկու կող-

ների ամբողջ հաւաքածուն, հանդերձ մի հատ ծաւալադրուակով:

Թիֆլիսի երկրորդ կարգի վաճառական մեծ պ. Յովհաննէս Գրիգորեան Լոմինեանցի հանգուցեալ տիկին Կատարինէն իր կենդանութեան ժամանակը կտակել է 400 ռ. Թիֆլիսի չքաւոր ուսումնարանների համար: Այդ կտակած գումարից նորա ամուսին պ. Լոմինեանցը, համաձայն իր հանգուցեալ կնոջ ցանկութեանը՝ նուրում է նորա անմահ յիշատակի հետեւ Հաւաքարի նորաբաց և Հափիսիման օրիորդաց ուսումնարանին 150 ռուբլի: Ուստի հազարաբաժնի հրապարակաւ յայտնում է իր խորին շնորհակալութիւնը վերոյիշեալ պ. Լոմինեանցին:

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ԹԻՒՐԻՒՄ

Կ. Պօլսի մէջ տեղի ունեցած մինիստրական փոփոխութիւնները կրկնութիւն են կազմում այն փոփոխութիւններին, որոնք կատարվում էին սուլթանները մայրաքաղաքի մէջ 1876 թուականի դարձեցից, զրում է «Голосъ»: Գոքա մի քանի ժամանակից դարբել էին և Բ. Գուռը միջոց ունէր հետեւ աւելի դրական քաղաքականութեանը: Սուլթանը Արքու-Համիդ կարծես թէ հասկացաւ, որ անկարելի է երկիրը կառավարել անզաղար փոփոխելով իր խորհրդատուներին և յոյս դրեց իր ընտրած մինիստրները հաւատարմութեան վրա: Օտար պետութիւնների ներկայացուցիչները թիւրքաց կառավարութեան մօտ ազատ շունչ քաշեցին, յուսալով, որ վերջապէս նրանք կարող են գործ ունենալ հաստատ զիջք ունեցող պետական մարդկերանց հետ և ոչ թէ ըրպէս կան փոխադրութիւնների հետ, որոնց ամեն մի ըրպէ սպառնում է աքսոր կամ բանտ:

Մինիստրական այժմեան դժուարութիւնները ցոյց են տալիս, որ սուլթանը վերադառնում է հին կարգերին: Այդ դժուարութիւններից առաջ կալանաւորվեցան մի քանի բարձրաստիճան փաշաներ, արձակվեցաւ սուլթանի զվարդայի շնորհները կազմված մի զունդ և սուլթանի հարեմից

մերի և ազատ պայմանագրութիւն է, ու հիմնված փոխադարձ հաւատարմութեան վրա:

Յայտնի է, որ ամեն մէկ հիմնարկութիւն իր վրա կրում է անպատճառ իր ժամանակակից տնտեսական կեանքի բնութիւնը: Կրեդիտի էական յատկանիշն է փոխադարձ հաւատարմութիւն: Ուրեմն պարզ է, որ նա չէր կարող ծնունդ առնել ամենայն մարդկային իրաւունքներից զուրկ ստրուկների մասանների վրա արտօնութիւն ունեցող դասերի տիրապետութեան ժամանակ, այն ժամանակ, երբ տիրում էր այն գաղափարը, որ ստրուկները հասարակական անհրաժեշտ երկուք է: Մինչև որ չը փոխվեցան այդ հայեացքները, մինչև որ փոփոխութեան չենթարկվեցան այդ տեսակ հասարակական կարգերը, մինչև որ հասարակութեան մէջ չը մտան փոխադարձ հաւատարմութեանը նպաստող գաղափարներ, մինչև այդ ժամանակ, ասում են, կանոնաւոր կրեդիտը չէր կարող գոյութիւն ստանալ: Երբ ստրուկութեան գաղափարները տեղ տուեցին աւելի մարդասիրական իդէալներին, երբ վերջ ստացան համբարները և երբ որ զարթեց ինքնաձայնութիւնը, հասարակութեան իսկական նպատակն է միջոց տալ ամեն մէկ անհատին օգուտ քաղելու հասարակական բարեքներից, հասարակական գործուներութիւնը պէտք է ձգտի հաւատարմանը բոլոր մարդկանց համար թէ բարոյական և թէ նիւթական դարձանալու պայմանները, այդ ժամանակ միայն լոյս տեսաւ կրեդիտը, որ զարգանալով և աւելի կանոնաւորվելով կարող է ապագայում ընդհանուր բարեքներով խորհրդաբանաւոր դառնալ: Ապա ինչպէս կարելի է որոշել թէ ինչ է կրեդիտը: Կրեդիտը այն ոյժն է, որի միջոցով կապիտալը փոխադրում է մէկի ձեռքից միւրի ձեռքը, որի

հայրենիք ուղարկվեցան մօտ 120 շնորհք կանայք: Այդ բոլորը բացառվում էր մի դաւադրութեամբ, թէպէտ Կ. Պօլսից ստացված միւս լուրերը պնդում էին, որ ոչինչ դաւադրութիւն չէ եղել:

Նոր մինիստրութեան կազմակերպութիւնը միջոց է տալիս հասկանալ մինիստրական դժուարութիւնների պատճառները: Նորահազմ մինիստրութեան առաջնորդ Ա. Մեդ-վեֆիկ-փաշան է, որ նորերում գրկվեցաւ Բրուսայի նահանգապետի պաշտօնից: Արտաքին գործերի մինիստրը պաշտօնը տուած է Սաֆֆեա-փաշային, որ Միթ-հադ-փաշայի ջերմ կուսակիցը և համախոհն է: Կ. Պօլսի մէջ արդէն խօսում են, որ կատարված փոփոխութիւնները Միթ-հադ-փաշայի կուսակիցների յարթութիւնն են կազմում:

Եթէ այս ճշմարիտ է, Թիւրքիայի մէջ նորից կը սկսվեն ամեն տեսակ դժուարութիւններ և անկարգութիւններ: Թէպէտ մինիստրութեան այժմեան նախադաշը չափազանց մեծ կարծիք ունի իր պետական և քաղաքական ընդունակութիւնների մասին, բայց և այնպէս նա ստիպված կը լինի գործել Միթ-հադի կուսակիցների թեւադրութեամբ: Յոյս կայ, որ այսուհետեւ Կ. Պօլսից անդադար լուրեր կը ստացվեն զանազան փոփոխութիւնների և նորակազմ մինիստրութիւնների մասին:

Ինչպէս հարգուեց հեռագիրը Ա. Մեդ-վեֆիկ-փաշայի մինիստրութիւնն էլ զրկվեցաւ իշխանութիւնից և կազմվեցաւ Սաֆիկ-փաշայի նոր մինիստրութիւնը:

ԵՂԻՊՏՈՍ

Արաբի-փաշայի դատաստանի արագ վախճանը թէպէտ զուրկ չէ ծաղրայի կողմերից, բայց մի և նոյն ժամանակ յարմար է այն նպատակին, որին ձգտում էին նրա հնարողները, զրում է «Голосъ»: Սկզբնական երկարատե քննութիւնից և մի քանի շաբաթվայ գաղտնի խորհրդակցութիւններից յետոյ, թէ ի՞նչի մէջ պէտք է մեղա-

միջոցով կապիտալը մտած լինելով կենդանութիւն է ստանում, անցնելով այն մարդու ձեռքը, որ գործ է դնում նորան արդիւնաբերութեան մէջ: Ուրեմն կրեդիտը ոչինչ չբացը չէ գործում, չէ պարունակում իր մէջ այն կախարակական ոյժը, որը կամենում են շատերը յատկացնել նորան: Ենթարկվելով բնութեան ընդհանուր օրէնքին, կրեդիտը չէ ստեղծում ոչինչից մի որ և ինչ բան, նա չէ ստեղծում կապիտալ և ինքն կապիտալ չէ: Կրեդիտի դերը տնտեսական աշխարհում սահմանափակում է արդիւնաբերութեան միջոցների փոխադրութեան մէջ:

Կրեդիտը, ես ասեցի, ոյժ է ստանում միայն այն ժամանակ, երբ մարդկանց յարեբերութիւնները մէջ սկսում է փոխադարձ հաւատարմութիւն տիրել: Երբ մի անգամ արդէն այդպիսի հաւատարմութիւն գոյութիւն ունի, այն ժամանակ կրեդիտը գործում է զլուստուրապէս երկու ճանապարհով՝ նա փոխադրում է կապիտալը կամ հաւատ ընծայելով մարդու անձնական աշխատանքին, կամ թէ նրկական ապահովութեան (обеспечение): Առաջին դէպքում նա կոչվում է անձնական կրեդիտ (личный кредит), այդ տեսակ կրեդիտը ստանում է օրրստօրէ աւելի լայն գործադրութիւն: Արդէն օրրաններ ծառայում են այն բազմաթիւ հիմնարկութիւնները, որոնք յայտնին կանաչան անուններով, առեւտրական, վաճառականական, փոխառու և փոխադարձ կրեդիտի ընկերութիւններ: Երկրորդ տեսակ փոխառութիւնը անունակալում է իրական կամ կարածական կրեդիտ: Արդէն օրրաններ ծառայում են կալուածական, քաղաքային բանկեր և փոխադարձ կալուածական կրեդիտի ընկերութիւնները:

Ս. Մանուէլ

գրել եզրագրական պատերազմական նախկին միջնորդին, դատարանը մի քանի րոպեի մէջ վճռեց Արաբի-փաշայի վիճակը: Մեղադրվածը ներկայացուց դատարանին և նրանց հարցին պատասխանեց, որ ինքը իրան մեղադր է համարում պատերազմական ապստամբութեան մէջ: Կատարները զբաղեցրին հետոյ յայտնեցին, որ մեղադրվածի խոստովանելից յետոյ աւելորդ են զանազան հարցերի առաջարկելը և Արաբի-փաշային դատապարտեցին մահուան պատժի: Հէնց որ խեղդիվ տեղեկութիւն ստացաւ դատավճռի մասին, նա անյապաղ փոխարինեց այդ պատժը աքսորով, աւելացնելով որ, եթէ Արաբի-փաշա կը վերադառնայ Նիւ-Յորք, նա անյապաղ կը զիջուի: Այդ վրձնը իսկոյն օրէկէն ոյժ ստացաւ և այժմ երեւի Արաբի-փաշա դուրս է եկել Նիւ-Յորքի սահմաններէ, իրաւունք ստանալով ընտրել իր բնակութեան տեղը:

Գժուար չէ հասկանալ, որ այս բոլոր վարդաց կանոնաւորված և վճռված էր: Արաբի-փաշա, խոստովանելով իր յանցանքը և դատաւարները, նրան մահուան պատժի ենթարկելով, առաջուց զիսկին, որ խեղդիվ կը փոխարինէ պատժը այն պայմանով, որ Արաբի այլ ևս չը վերադառնայ Նիւ-Յորք: Մահուան պատժի փոխարինութիւնը մի զին էր, որով ձեռք բերվեցաւ Արաբի-փաշայի լուսթիւնը այն շարժումներէն, որ և պատճառներ մասին, որոնք ստիպեցին նրան զինուորված ապստամբութիւն սկսել:

Այդ լուսթիւնը անհրաժեշտ էր անգլիացիներին համար, որպէս զի տարածայնութիւն չը ծագէր Բ. Կրան հետ և որպէս զի նրանք կարողանային պահել զահլի վրա անորը և անընդունակ Տեղեկ-փաշային, որ այժմ կատարելապէս ենթարկվել է անգլիացիներին կամբին: Ինչպէս երևում է, Արաբի-փաշայի համար գժուար չէր ապացուցանել, որ ապստամբութիւն սկսելու համար նա դրված էր ոչ թէ միայն Կ. Պոլսից, այլ և խեղդիվ պալատից: Այդ յայտնութիւններին առաջն առնված է: Ինչ կը վերաբերի Արաբի-փաշայի աքսորին, դա չափազանց հեշտացնում է անգլիացիներին ձեռնարկութիւնը: Կայրէի դատաստանական դրոշմ վերջին հետեւն էր այն անցքերին, որոնց առաջ բերեց անգլիացիներին միջամտութիւնը եզրագրական դրոշմին: Արաբիին կենդանի թողնելով, անգլիացիները հաշտեցրին իրանց հետ նրա բազմաթիւ կողմնակիցներին, և այժմ լորդ Կեօֆերին համարձակ կարող է ձեռնարկել վերանորոգութիւններին և նոր կարգեր մտցնել Նիւ-Յորքի մէջ: Յոյս կայ, որ առնակարճ ժամանակամիջոցում յայտնի կը լինեն անգլիացիներին նախագծած վերանորոգութիւնները, որոնք Նիւ-Յորքը Անգլիային հպատակ մի պետութիւն կը դարձնեն:

Ոչ որ չէ կարող բողոքել այդպիսի նորաձեռնութեան դէմ: Եւրոպան վարդաց հաշտվել է Նիւ-Յորքը անգլիացիներին ձեռքը անցնելու մտքի հետ, իսկ թիւրքիան ներկայումս այնպիսի դրութեան մէջ է, որ նա անկարող է ընդդիմադրել Անգլիային: Կ. Պոլսի մէջ այժմ սկսվել են միջնորդական դժուարութիւններ և սուլթանը աշխատում է վերադառնալ այն կարգերին, որոնք գոյութիւն ունեին Արաբի-Վաղի ժամանակ: Այսպիսի խառնակութիւնները ի հարկէ միջոց չեն սայ Բ. Կրանը բողոքել այն վերանորոգութիւններին դէմ, որոնց կը մտցնէ լորդ Կեօֆերին Նիւ-Յորքի մէջ:

ՆԱՄԱԿ ՊԱՐՍՎԱՍՏԱՆԻՑ

Գաղթե՛՛՛, 14 նոյեմբերի

Նրէկ հեռագրով իմացանք, որ Արաբի-փաշայի առաջնորդ Գրիգոր եպիսկոպոս Մուշեղեանցը ամսուս 13-ին վախճանվել է Ռուսի քաղաքում, ուր գնացել էր իր հովուական այցելութիւնը տալու այն կողմերի ուղղութիւն հայերին, որոնք թախանձակին խնդրել էին: Նա կտակել է, որ իր մարմինը տանեն և Սալմաստ թաղին: Հանդուցեալ սերբազանի մասին մենք այսքան կատենք, որ նա թէև մի ուսումնական մարդ չէր և այժմեան պահանջների համապատասխան լեզուագիտութիւն և կրթութիւն չուներ, բայց չափազանց վառ հայրենասիրական սիրտ ուներ և շատ էլ նախանձախնդիր էր հայրենական եկեղեցուն: Սրբազանի լուստկութիւնները մին էլ այն էր, որ անդադար քարոզում էր ժողովրդին, ուր որ գնար, ուր որ լինէր: Նրա քարոզներին նիւթը միշտ լինում էին աւետարանի խօսքերը և յորդոր ժողովրդին, որ իրանց որոշ կրթութիւն տան և դարուս պահանջներ համեմատ արժանաւոր դպրոցներ պահեն: Այդ բարի հոգեւորականը կարծես թէ քարոզութիւնը յատկապէս ունէր էր, որովհետև նա լուս ընծաւոր կամ յարմարութիւններ ուներ և լեզուն էլ նորան յայտնուում էր: Երբ որ նա առանկ էր դուրս գալիս, այնպէս թեթեւեղում և ձգձգվում էր և իր ձայնին զանազան շեշտաւորութիւններ տալով իր խօսքերը մտանցում էր ժողովրդի սրտին, որ կարծում էր թէ, նա ատենախօս վրա փոխվելով, մի ուրիշ մարդ է դարձել: Այս ևս կատենք, որ երբեմն պատահում էր, որ նա իր խօսքի թեւեւ լուս չը յիշելով կորցնում էր և երբեմն էլ պատմական սխալներ էր անում, երբ որ խօսում էր հին և պատմական ժամանակներից: «Մեծնդի ետեկից կամ լուս, կամ ոչինչ» է ասած, և մենք նորա մի մասնաւոր պահասութիւնը ցոյց տալով, բնա միտք չունենք նորա վրա մի որ և իցէ արատ ձգելու, այլ կամենում ենք ապացուցանել, որ եթէ մի հասարակ ընթերցանի մարդ կարող է այդչափ քարոզել, հասա սրբապի աւելի կարող են մեր այն հոգեւորականները, որ կատարել կրթութիւն ունեն: Հանդուցեալ սրբազանի պաշտօնավարութեան մասին էլ այս կատենք, որ նա չափազանց զգուշ մարդ լինելով, բնա խոսուութեան տեղիք չէր տալիս, և թէ որ մի որ և իցէ դեպքում սխալվում էր, իսկոյն սխալվելով իրան ուղղում էր: Հէնց զրա համար էր, որ ժողովուրդն էլ նորան ընդ միշտ սիրեց և համակրեց: Նա երբ ամբողջ տարին խաղաղ առաջնորդութիւն արեց Արաբի-փաշային: Այս վերջին տարին միայն, նա զանվում էր մի տեսակ հոգեկան հիւանդութեան մէջ, բայց չը նայելով դրան, նա մինչև իր վերջին շունչը աշխատում էր իր հօտի բարօրութեան և զարգացման լարեկարգութեան համար:

Այն Արաբի-փաշային էլ թիւթիւրի, Ատարախանի և Եւզլիի պէս առանց առաջնորդի մնաց: Ռուսաստանի թեմերից էր որ պակասում են թեմակալ առաջնորդները, նորանց կառավարում են իւրաքանչիւր թեմի հոգեւոր կառավարութիւնը կամ կոնստանտնուպոլսի, իսկ մեզանում որ այդ մարմինը չը կայ, սրբան զգալի պէտք է լինի առաջնորդի պակասութիւնը, նայելով նրա վրա ոչ միայն կրօնական, այլ մինչև անգամ քաղաքական տեսակետից, որովհետև Պարսկաստանի առաջնորդները մեծ պատիւ և մեծ իրաւունքներ են վայելում Պարսկից կառավարութիւնից: Այս ի նկատի առնելով, չենք կարծում, որ վերահիւարդ կամ Ս. Մինոզը երկար ժամանակ մեր վիճակը առանց առաջնորդի թողնեն: Միթէ իրանք էլ չեն հասկանում:

Վերջապէս հանրածանօթ Եջիս Երազուլարի երկրորդ անգամ ևս կալանաւորվեցաւ թիւթեաց կառավարութիւնից և քշվեցաւ: Բայց թէ ինչ ձեռով կալանաւորեցին և թէ ուր տարան, դեռ յայտնի չէ:

Իսկոյն, որ երկաթաւոր դրոշմ վերջացել է թէհրանում և կոնստանտնուպոլսում և վերահիւարդ շահից, ուրեմն դրոշմ, ինչպէս երևում է, կը սկսվի առաջիկայ դարձելից: Երբ որ կիրառործվի այդ երկաթաւորին, այն ժամանակ թարիլը, որ Պարսկաստանի առաջին վաճառաւոր և անուանի քաղաքն է համարվում, իր աւետարական շրջանի վարկը կորցնելով, հետզհետ կը նուաղի, իսկ զրա փոխարէն Ռէշադը, Ղազարին և թէհրանը ուղիղ դիր վրա լինելով մեծ դեր կը խաղան առևտրական ասպարեզում:

ԱՐՏԱՐԻՆ ԼՈՒՐԵՐ

«Événement» լրագիրը հարգորում է մի քանի մանրամասնութիւններ այն պատմութեան մասին, որ իր թէ փարիզում դաւադրութիւն էր կազմվում: Վերջինից լրագիրը աշխատակիցներից մէկը տեսակցութիւն ուներ գեներալ Կամպէնոնի հետ, որը բացառեց թղթակցին, թէ ինքն, կամ պէնսօնը, առանձնացած կեանք է վարում, վարդաց չէ տեսել Գամպէտային և չը գիտէ, թէ ինչ է կատարվում վերջինի մօտ: Նա շատ ցաւում է, որ Գամպէտան ներկայումս աւելի շատ ժողովուրդ է ընդունում իր մօտ, քան թէ հարկաւոր է, և որ այդ ժողովուրդում շատ աւելորդ բաներ են խօսվում: Ինքն, կամպէնօնը, շատ անբարակաւ է նրանով, որ իր անունը ևս խառնված է այդ զորքում, մասնաւոր որ, ինչպէս իրան հաստատ յայտնի է, այդ վերջին հանգամանքը շատ անախորժ տպաւորութիւն զորքից Գրեվի վրա: Բայց եթէ երբ և իցէ նախագահի ընտրութեան ժամանակը կը լինի, այն ժամանակ նախագահական բաղկաթու ստանալու համար երկու կանդիդատներ կան—Բրիտան և Լէօն Սէ: Ինքն, իր կողմից, հակառակ է այն բանին, որ հանրապետութեան նախագահ պատերազմական զինեալ լինի, և, պատահմամբ եթէ ինքն նախագահ ընտրվի, այն ժամանակ ինքն կարող է ապացուցանել, թէ սրբան փոքր է իր մէջ պատերազմականը: Առհասարակ հանրապետութեան կառավարութիւնը պէտք է զգոյշ լինի, արտասահմանում Ֆրանսիան մի տեսակ խրտուրդ է միապետութեան համար, և հանրապետութեան ներսում անժամանակակից աղիտացիաներով աւելի ևս կարելի է վախճանել կարծառես եւրոպական քաղաքագէտներին: Եթէ կը զայ ժամը կըրկին զէնք վերջնաւ Ֆրանսիան պաշտպանելու համար նրա արտաքին թշնամիները զէմ, ինքն, կամպէնօն, աղիտութեամբ կը կատարի իր պարտականութիւնը զէնք ձեռքին:

Փարիզի «Le National» լրագիրը, Լօնդոնի իր թղթակցի խօսքերով, հարգորում է, որ Ռուսաստանը համաձայնից ֆրանսիայի առաջարկութեան հետ եզրագրական խնդրի առիթով կօնֆերենցիա կազմելու մասին: Այդ կօնֆերենցիան, շատ հաւանական է, որ յանձն կաննի վճռել Մաղադասկարի, Կօնգօի, Տաղէրուրի և Տօնիլիի խնդիրները:

ԽԱՆԻ ԼՈՒՐԵՐ

Եւրօպայի թատրօնները: Եւրօպայում ներկայ րօպէում կան 1,457 թատրօններ: Իտալիան ունի 348 թատրօններ, Ֆրանսիան—337, Գերմանիան—194, Մեծ-Բրիտանիան—150 Սպանիան—160, Ռուսաստանը—44, Բելգիան—34, Հօլլանդիան—22, Շվեյցարիան—20, Պորտուգալիան—16, Շվեյցիան—10, Գանիան—10, Եթովպիան—8, Յունաստանը—4, Թիւրքիան—4, Բուսնիան—3 և Սերբիան 1:

Օձ և բը և վայրենի դադա նսն և բը Հն դական տան ու մ: 1881 թվ ընթացքում Հնդկաստանում թունաւոր օձերը և վայրենի դադաները խածել են 18,670 մարդկանց: 2757 մարդիկ զոհ են դարձել վայրենի դադաներին: Նոյն տարում օձերի և գիշատիչ կենդանիների կերակուր են դարձել 43,609 զուլս տաւար: Իսկ մարդիկ, 1881 թվ ընթացքում ջնջելու համար այդ թշնամիների սպանել են 254,968 օձեր և 15,284 գիշատիչ կենդանիներ: Տեղական կառավարութիւնը վասակար կենդանիներին ջնջելու համար ամբողջ տարվայ ընթացքում տուել է 102,810 ռուբլի:

Եղի սս ոնի ն որ գիւտը: Մարսելի մի լրագիրը հարգորում է, որ Եղիտօնը մէկ նոր շապիկ է հարել, որը 365 ծաւրեր ունի: Իւրաքանչիւր օր կարելի է մէկ ծաւր բացանել, և, այդպիսով, շապիկը կը պահպանի իր մաքրութիւնը 365 օրեր ընթացքում: Նահանջ տարիները համար առանձին օրինակներ կը լինեն:

Բ ժ ի շ կ-կ ան այը Ս պ ան ի ա յ ու մ: Մաղրի-զի համալսարանի բժշկական ֆակուլտետը, այս օրերս, բժշկական դոկտորի աստիճանի արժանի համարեց աիկին Մարտինա-Կաղէշի-Բէլլասպիին: Սպանիայում դա առաջին օրինակն է, որ կինը

բժշկականութիւնը ուսումնասիրելով ստանում է դոկտորի աստիճան: Տեղական լուս լրագիրները մեծ գովասանքով են խօսում աիկին Բէլլասպիի մասին և պատմում են, թէ սարսափելի ծանր աշխատանքներից յետոյ նա հասա իր նպատակին: Նա գտա իր հետեղին, որը նոյնպէս ցանկացաւ բժշկականութիւնը ուսումնասիրել վալենցիայում, բայց կըր նրան այնտեղ չընդունեցին, նա Մաղրիզ գնաց:

ՄՇԱԿԻ ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

ՀԻՒՍԻՍԱՅԻՆ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹԵՆԻՑ

ՕԳԵՍՍԱ, 1 զեկտեմբերի: Վնութիւն է սկսված անկանօն կերպով նաւախիճ դուրս բերելու մասին Ազգիկան Տոլում: Դատաստանի են ենթարկված Տազարօզի նաւային զբաւենեակի նախկին երկու կառավարիչները:

ՎՈՒՍԳԻՍ, 1 զեկտեմբերի: Հիւսիսային դաւառներում թաղաւորական անտառները փայտ կտրելու համար նշանակված աճուրդը չը կայացաւ բարձր սակագնի պատճառով:

ՍՕՅԻՍ, 1 զեկտեմբերի: Նոյեմբեր ամսին Մակեդոնիայում բազմաթիւ բողոքներ կալանաւորվեցան: Կալանաւորվածների մի մասը շղթայակալ Բիտոլիա է ուղարկված:

ՓՈՒԹԳ, 1 զեկտեմբերի: Ֆինանսների մինիստրը յայտնեց պատգամաւորների ժողովին, որ Ֆրանսիայի ֆինանսական զրու-թիւնը վառ չէ, միայն լրջմտութիւն է հարկաւոր:

Կ, ՊՈՒՍ, 1 զեկտեմբերի: Սուլթանը թղթուութիւն տուեց Ֆրանսիային հիմնել Պողջուրեան Տոլմացում, Կարմիր Տոլում, Տոլային կայսրան և Կօնստան:

ՕԳԵՍՍԱ, 1 զեկտեմբերի: Հարաւարեւմտեան երկաթուղիների վարչութիւնը երկարացրեց փոքրացրած տարիքի գործողութիւնը Օգէստ հաց տեղափոխելու համար, այդ տարիքը նշանակված էր ներկայ տարվայ մարտի 10-ից մինչև նոյեմբերի 25-ը: Նոյնպէս վերջված է նոր մեծացած տարիքը, որը ենթադրված էր գործադրել 1882 թվ նոյեմբերի 26-ից մինչև 1883 թվ մարտի 3-ը:

Ս. ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 1 նոյեմբերի: «Новое Время» լրագիրը հարգորում է, որ պետական խորհուրդը հաստատեց ջրային հարդրակցութեան համար 6 միլիօն ռուբլ տուլու մասին կազմած նախագիծը: Չերնեակով միջնորդում է Տուրկեստանի մէջ շերամապահութեան զարգացման մասին: Պալատական մինիստրը ուղեւորվեցաւ Տամբովի նահանգը: Ներքին գործերի մինիստրութեան հրէական մասնաժողովը նախագծում է հրէական ազգաբնակչութեան վիճակագրութիւնը: «Виржев. Вѣдомости» լրագիրը հարգորում է, որ ֆինանսների մինիստրը ընդգէմ է եկամուտների զիւսահարկին, որ նախագծել է զիւսահարկը ուրիշ եկամուտներով փոխարինող մասնաժողովը: Մասնաւոր պատուէրների համեմատ պողպատե ընկաների շինող գործարանատերերին պրեմիաներ տալու համար եկող տարվայ համար նշանակված է 1,200,000 ռուբլ:

ԼՕՆԴՕՆ, 1 զեկտեմբերի: Երէկ, առսաց նոր դեսպան բարօն Մօրէնգէյմ ներկայացաւ թագուհու:

ՍՕՅԻՍ, 1 զեկտեմբերի: Հրատարակված է հրաման, որով ազգային ժողովի բացու-մը նշանակված է զեկտեմբերի 8-ին: Պլեդ-նայի պատգամաւոր ընտրված է գեներալ Սօրօլի:

Ի մագիր—հրատարակող ԳԻՒԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

ԲԱՅՅԻ

ԽԱՄԱՅԻ

ՄԵԼԻՔՈՒԹԻՒՆՆԵՐԸ

Գինն է 1 ռ. 50 Կ.

Գիրքը բաղկացած է 467 էրեսներից թիֆլիսում վաճառվում է

Մշակի՝ խմբագրատանը. — Կենտրոնական գրափաճառանոցում Մերմանովի տանը № 3 և 4. Պ. Զաքարյայ Գրիգորեանցի «Կովկասեան գրափաճառանոցում».

Օտարաբարացիք կարող են դիմել կամ յիշեալ տեղերը, կամ ուղղակի հեղինակին հետեալ հասցեով: ТИФЛИСЪ. Редакция „Мшакъ“ РАФФИ.

Արդէն վաղուց մամուլի տակից դուրս եկած ճիգրան Նազարեանի հրատարակութիւնների VII դրբը:

ՂԸԼԸՅԷ ԿԸՆՍՆՈՅ ՊԸՆԸՓԵՇԱԿԸ

(Ղարաբաղի բարբառով և նոյն կեանքից) Հեղ. Կ. Կ. Մ. Շահնազարեանց:

Լոյս տեսաւ և վաճառվում է «Ազրիւրի» խմբագրատան (Мшк. у.п. д. № 127) և թիֆլիսի յայտնի գրափաճառանոցներում:

Գրքի կից տպուած են Ղարաբաղի լեզուի քերականական մի քանի յատկութիւններ, խորթ խօսքերի բացատրութիւնները և զանազան յայտարարութիւններ: Գինը 20 կոպէկ է:

Լոյս տեսաւ «Հայաստանի փառքը» վերնագրով Հայ երեւելի արքաների պատկերների հաւաքածուն տպուած մի թերթի վրա. պատկերները նկարված են գոյնաւոր ներկերով: Գինն է 2 ռուբ. դումարով զնորներին զիջումն կը լինի: Յանկացողք կարող են դիմել Մոսկովա հրատարակչին հետեալ հասցեով.— «Москвѣ», на Стрѣтенскѣ, домѣ Бѣляева, Ивану Христофоровичу Паносову.

ԳԱՇՆԱՄՈՐՐ վարձով է տրվում կամ ծախվում է: Գավիղովիկայ փողոց, տուն Գանանովի, բնակարան ֆանանովի: 2—3

Թիֆլիսից հեռանալու պատճառով ՆԱԲԵՏԻՆԱՅԱՍ փողոցի վրա ծախվում է ԳԵՏԻՆԵ շատ էժան գնով: Հարցնել Անդրիական խանութի մէջ: Նոյն տեղը շատ ավելի քան այժմ կիսափութն են ծախվում: Որովհետեւ այժմ երկաթը էժան է, մահճակալները ծախվում են 8, 10, 12, 14 ռ. և այլն: 5—10

ԵՐԻՏԱՍԱՐԳ

Աւարտելով կրկնակի իտալական հաշւապահութիւնը, ցանկանում է մտնել գործակատար զանազան առևտրում, հասցին խմբանալ «Մշակի» խմբագրատանը: 3—3

Նաւթի ՏԱԿԱՌՆԵՐԻ համար տախտակներ (КЛЕПКИ ДЛЯ ФОТОГЕННЫХЪ БОЧЕКЪ) ցանկացողներին թէ պատրաստի և թէ ուղած չափին պատրաստելու համար խնդրում եմ դիմել Բաթում, ԱՐՇԱԿ ՄԱՏՈՒՅԱՆՑԻՆ: Въ БАТУМЪ, Аршаку ПАТУРОВУ. 16—20

ԹԷՅ առաջին հունիսի այս տարի չափազանց գոյնաւոր և հոտաւետ: Այդ թէյից ԱՆԳԼԻԱԿԱՆ ԽԱՆՈՒԹԻ մէջ ստացված է 50,000 ֆունտ և ծախվում է 25% էժան և աւելի լաւ քան թէյ ուրիշ տեղ: Օրինակ. Լաւ ԿՕՆՅՕ թէյ 1 ռ.—1 ռ. 20 կոպ., պատուական ՍԱՆՅԱ թէյ 1 ռ. 40 կ., հիանալի ՄՕՆԻԿ թէյ 1 ռ. 60 կ. այս թէյ ամեն տեղ ծախվում է 2 ռ.—2 ռ. 50 կ., գեղեցիկ ԿԱՅՍԱՌ թէյ 1 ռ. 80 կ. և ամենալաւ Ֆու-չու-ֆու թէյ 2 ռ. մաքուր թէյ առանց թղթի: Նոյն տեղը սովորաբար լինում են 500 երկաթէ ՄԱՀԱԿԱՆՆԵՐ 6 ռ.—60 ռ., երկաթէ ԳՐԻՉՆԵՐ ամբողջ Անդրկովկասի համար, շօխաղ ֆրայ, Շեփիլդի ԳԱՆԱԿՆԵՐ, վերականգնող ՄԱԿՄԱՍՏԵՐ մազերի համար, հրացաններ ԳԱՌՈՒ, ՌԵՎՕԼՎԵՐՆԵՐ վերջի, ՔԱՄԲԵՐ Բարնեթի, Կոլմանի նըշըշայ, ԱԲՏՄԵՆ Շփարցի կէս գնով: ԱՆԳԼԻԱԿԱՆ ԽԱՆՈՒԹԻ, ԹԷՅԻ ԽՍԻ ՄԷՋ ԱՐԾՐՈՒՆՈՒ ԳԱԼԼԵՐԻՅՈՒՄ № 156, 157, 158, 159 և 100: 86—100

ԱՆԳԼԻԱԿԱՆ ԽԱՆՈՒԹԻ ՄԷՋ ԹԷՅԻ ԳՆԵՐԻ ՆՇԱՆԱՌ ՓՈՒԲՐՍՅՈՒՄ

(MAISON DE CONFIANCE) ԱՐԾՐՈՒՆՈՒ ԳԱԼԵՐԱ № 156, 157, 158, 159 և 160.

Table with 2 columns: Price per unit and Quantity. Items include 1 ռ. 10 կ. թէյ, 1 ռ. 20 կ. թէյ, 1 ռ. 40 կ. թէյ, 1 ռ. 60 կ. թէյ, 1 ռ. 80 կ. թէյ, ամենալաւը 2 ռ. 3

Մի և նոյն տեղը գործակալութիւն վաճառման շօխաղի և Կախօ-ֆրայ էստենցիայի, Պալմերի բիսկիտների, Բազրի կօնֆետների, Շեփիլդի դանակների, Տուրնիերի գրիչների, Գաուի հրացանների, վեկիլի բեկովիլերների, Բարնսթրի թամբերի, Մեկիլի ամանների, Կոլմանի կրակմալ և մանանիկ, Շփարցի սլոթներ և այլն և այլն: 32—100

ԱՍՄՆԱԲՈՅԹ ԱՄԵՐԻԿԱՅՅ (Doctor of Dental Surgery of the Baltimore College): ՏԻՎԻՆ ՄԿՐՏԵԱՆՅ, ծն. Եակոբի, բժշկում է ամէն տեսակ ԱՍՄՐ ԶԱՆԵՐ և առնում է հարկաւոր ՕՊԵՐԱՅԻԱՆԵՐԸ Ամերիկայի ամենամոր ձևով: Ընդունում է միայն ԿԱՆԱՆՅ և ԵՐԵՄԱՆԵՐԻՆ 10—3 ժամը: Լիւսիցովի տանը, Սարովայա և Սերգիեւիկայա փողոցների անկիւնում: 7—15

ՄԵՐ ՓԻՐՄԱՅԻ ԹԷՅԻ ԳՈՐԾԵՆՈՂՆԵՐԻՅ

Խոնարհաբար խնդրում ենք ուշադրութիւն դարձնել որ բանդերոյների վրա անպատճառ լինեն Կ. և Ս. տառերը: Եղբայրներ Կ. և Ս. ՊՕՊՕՎ առևտրական տունը Մօսկվայի մէջ: 3—10

ՆԱԽՎՈՒՄ ԵՆ ԶԻԱՆԵՐ աշխատող, լծիող պիտանի ֆուրգոնների համար և այլն: Հասցին. «Երօպա» հրատարակչի մէջ № 22 5—5 (1)

ԱՐԴԷՆ ԴՈՒՐՍ ԵԿԱՐ ՄԱՄՈՒԼԻՅ ա. Մեծաղբ օՐԱՅՈՅՅ 1883 թ. ֆ. սկզբուն պատկեր՝ ՍՐԲՈՅՆ ԳԵՂԱՐԻՍՅ իսկ վերջուն՝ ԾԱՂԻԿ ԸՆՏԱՆԵՍՅ Ը. ա. յաւելվածով Գինն է մինչև 600 վերսա . . . 35 կոպ. իսկ նորանից բարձր . . . 40 կոպ.

Բ. փոքրաղբ օՐԱՅՈՅՅ 1883 թ. ֆ. սկզբուն պատկեր՝ ՎԵՐՍՈՒՄՄԵՆ Ս. ԱՍՏՈՒՄՍԵՆԻ վերջուն՝ ցուցակ գրեանց Գինն է . . . 15 կոպ. Գ. Ամենօրեայ հատուածական օՐԱՅՈՅՅ 1883 թ. ֆ.

Մեծ թուանշաններով սև, կապոյտ և կարմիր գոյներով, տախտակն զեղ. պատկերներով զարդարած Երեւանում գինն է . . . 1 ռ. իսկ ուրիշ քաղաքներում . . . 1—25 կոպ. Մեծաղբը և փոքրաղբը օրացոյցներում մացրած են բոլոր ՕրՏ. Հարց. ՄԿ. և ՀԻՐ. կարգաւ: Երեք օրացոյցներում ևս կան Յ. Ռ. և Լ. տօները: հանդերձ դուշակութեամբ Օրոց: Մեր հասցին ԵՎ Գ. Զրիւան, Ա. Ս. Գլաւմիրյանց Խմբ. Հրատ. Արգար Գուլամիրեանց 1—3

КАВКАЗСКОЕ ОТДѢЛЕНИЕ ГАЗЕТЫ „ГОЛОСЪ“ ПОДПИСКА НА 1883 ГОДЪ.

Подписная цѣна съ пересылкой 17. (отсылку подписныхъ денегъ отдѣленіе принимаетъ на свой счетъ). Редакция отвѣчаетъ за исправную доставку, только тѣхъ экземпляровъ, на которые принята подписка въ отдѣленіи. Подписка на „Голосъ“ и объявленія принимаются при „Центральной Внижной торговли“. Статьи и сообщенія для помѣщенія въ текстѣ газеты „Голосъ“ должны быть доставляемы ЗАВѢДЫВАЮЩЕМУ отдѣленіемъ, (уголь Саперной и Б. Водовозной д. и кв. ЕВАНГУЛОВА). 2—3

Լոյս տեսաւ մանկավարժական «ՎԱՐՃԱՐԱՆ» ամսագրի № 4.

Բովանդակութիւն: Փ. Վարդանեան.—Սպենսերի մանկավարժական մտքերը (չարունակութիւն): Յ. Զիգրանեան.—Տնարարութեան ուսումնարաններ: Ա. Բահաթրեան.—Երկու օրինակելի դաս սրբազան պատմութիւնից: Ս. Պալասանեան.—Ազդոյնի պատմութիւնը տարրական ուսումնարաններում (չարունակութիւն): Ղ. Աղայեան.—Հարկաւոր է արդեօք Ը հնչելի օժանդակութիւնը զրազտութիւն ուսուցանելիս: Ս. Ս. և այլք: Մանկական բաժին, ա) Մանկական հէքիայթ, բ) Ղահվէ, գ) Թաբալորի նոր զգեստը—Չուարձայիք, Հանելուկներ, Նոյնիւրներ:—Ցայտարարութիւններ: «Վարժարանի» տարեկան զինն է հինգ ռ. տարին սկսվում է օգոստոսից և տևում է մինչև յունիսը: Ստորագրուել կարելի է խմբագրութեան զրատենեակում, պ. Ծատուրեանի խանութում և Վ. Շահվերդեանի պալիլիօնում:

ՕԳՈՍՏՈՍ ԱՄՍԻ ՄԵԿԻՅ ՍԿՍԵՅ ՀՐԱՏԱՐԱԿՎԵԼ ՎԻԵՆՆԱՅՈՒՄ

L'ORIENTAL

ՅՐԱՆՍԵՐԷՆ ԹԵՐՐԸ, ԱՄԻՍՅ ԵՐԿՈՒ ԱՆԳԱՍ: «Ժուրնալ դ'Օրիան» լրագրի հին բաժանորդներին դադարեցրած թերթի տեղ կուղարկվի այդ նոր հրատարակութիւնը: «L'Oriental» թերթի տարեկան զինը 8 ռուբլ է, կէս տարվանը 4 ռուբլ: Գրվել կարելի է «ՄԵՍԿԻ» խմբագրութեան մէջ, կամ ուղղակի վիեննայում զիմելով հետեալ հասարակ հասցեով. Vienne (Autriche) M. F. Salles I. Neuer Markt 9.